

ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆ

Խնդիրները այն լրացումներն են, որոնք կը ցուցնեն գործողութեան հետ կապուած տարրերը՝ առարկաներ, անձեր եւ այլն:

Խնդիրը կը լրացնէ մասնաւորաբար բայ մը, ինչպէս նաեւ գոյական մը, ածական մը, դերանուն մը, մակբայ մը, կապ մը, վերաբերական մը, ձայնարկութիւն մը:

Այստեղ նկատի պիտի առնենք **բայական** եւ **կապական** խնդրառութիւնները:

ԲԱՅԱԿԱՆ ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆ

Խնդիրները կ'ըլլան 2 տեսակ՝ **ուղիղ խնդիր** եւ **անուղղակի խնդիր**:

Ուղիղ խնդիր

Ուղիղ խնդիրը կը ցուցնէ գործողութիւնը ուղղակիօրէն իր վրայ կրող առարկան: Ան կ'ըլլայ հայցական հոլովով:

Կը պատասխանէ զո՞վ կամ ի՞նչ հարցումին:

Օրինակ՝ Հաց ուտել: (ի՞նչ)

Արագը դրկեց նամակը: (ի՞նչը)

Ան կը սիրէ ընկերը: (զո՞վ)

Ուղիղ խնդիր կը պահանջեն ներգործական սեռի բայերը:

(Արեւելահայերէնի մէջ ներգործական բայերը անձ ցոյց տուող գոյականներէն կը պահանջեն տրական հոլովով ուղիղ խնդիր՝ գնահատեց աշակերտին:

Իսկ ոչ-անձ ցոյց տուող գոյականներէն հայցական հոլովով ուղիղ խնդիր՝ գնահատեց աշխատանքը.)

Ուղիղ խնդիրը կրնայ նաեւ բացառական հոլով ըլլալ, եթէ տուեալ առարկան մասնատելի է.

Օրինակ՝ Հաց ուտել, բայց նաեւ՝ հացէն ուտել:

Որոշ պարագաներու չէզոք բայերն ալ կրնան ուղիղ խնդիր առնել:

Օրինակ՝ Լաց մը լալ կամ լալ մը լալ, կռիւ մը կռուիլ կամ կռուիլ մը կռուիլ:

Անուղղակի խնդիր

Անուղղակի խնդիրները կ'ըլլան մի քանի տեսակ:

- Յանգման եւ մատուցման անուղղակի խնդիր
- Վերաբերութեան անուղղակի խնդիր
- Անջատման անուղղակի խնդիր
- Միջոցի անուղղակի խնդիր
- Ներգործող անուղղակի խնդիր

Անուղղակի խնդիրի տեսակներ

Յանգման եւ մատուցման

Ցոյց կու տայ այն տարրը որուն կը մօտենայ գործողութիւնը կամ որուն կը տրուի բան մը: Տրական հոլովով:
Հարցում՝ որո՞ւն կամ ի՞նչ բանին:

Օրինակ՝ Վկայականը տուին յաջող աշակերտին: (որո՞ւն)
(Վկայականը ուղիղ խնդիր է)

Վերաբերութեան

Ցոյց կու տայ այն տարրը որուն կը վերաբերի խօսքը, որու մասին տեղեկութիւն կը տրուի: Ընդհանրապէս բացառական հոլովով, եւ նաեւ կ'արտայայտուի յաճախ վերաբերութիւն ցոյց տուող որոշ կապերով (մասին, վրայ, նկատմամբ, վերաբերեալ):

Օրինակ՝ Կը գրուցէին անցած օրերէն:

Անջատման

Ցոյց կու տայ այն տարրը որմէ կ'անջատուի, կ'ելլէ, սկիզբ կ'առնէ գործողութիւնը: Բացառական հոլովով:

Օրինակ՝ Նամակ ստացայ Յարութէն:

Միջոցի

Ցոյց կու տայ այն տարրը, որու միջոցով կը կատարուի գործողութիւնը: Գործիական հոլովով:

Օրինակ՝ Անոնք քաղաք մեկնեցան ինքնաշարժով:

Ներգործող

Ցոյց կու տայ այն տարրը , որ իր կատարած գործողութեամբ կ'ազդէ ենթակային վրայ: Բացառական եւ գործիական հոլովով: Ներգործող անուղղակի խնդիր կը պահանջեն կրաւորական սեռի բայերը:

Օրինակ՝ Ապակիները կոտրեցան քամիէն:
Ամալի դաշտերը ծածկուած են ձիւնով:

Որոշ բայեր կրնան մէկէ աւելի հոլովով խնդիր առնել, նայած խնդրի բնոյթին:

Օրինակ՝

Բայ	Հոլով (իմաստ)	Օրինակ
Ամչնալ	Բացառական (երբ խնդիրը գոյական անուն է)	Կ'ամչնամ տնօրէնէն:
	Տրական (երբ խնդիրը անորոշ դերբայ է)	Կ'ամչնամ երգելու:
Այցելել	Տրական (անձի անուններու հետ)	Այցելել հիւանդի:
	Հայցական (տեղի անուններու հետ)	Այցելել դպրոց:
Արգիլել	Հայցական ուղիղ խնդիր՝ արգիլուած արարքին կամ իրին, եւ տրական անուղղակի խնդիր՝ այդ արգելքին ենթարկուողին	Բժիշկը արգիլեց հիւանդին օղի խմել:
Արտօնել	Հայցական հոլով ուղիղ խնդիր եւ տրական հոլով անուղղակի խնդիր	«Հայրը աղջկանը չարտօնեց ամուսնանալ մաւրին հետ»:
Զգուշանալ Վախնալ Սարսափիլ	Բացառական (խուսափիլ իմաստով)	«Կը զգուշանայի քեզի նայելու»:
	Տրական (ուշադիր ըլլալ իմաստով)	«Զգուշացի՛ր առողջութեանդ»:
Ընդօրինակել	Հայցական ուղիղ խնդիր	Ընդօրինակել հատուած մը:
	Բացառական (երբ ցոյց կու տայ ընդօրինակութեան աղբիւրը)	«Խոհագիրը ընդօրինակեցի ճաշացուցակէն»:
Լսել	Հայցական ուղիղ խնդիր	Լսել ձայն:
	Տրական (մտիկ ընել)	Լսել մէկուն, ծնողքին:
Կապել	Միակողմանի կապ	Էշը կապել ծառին:
	Փոխադարձ կապ	«Տղաս սիրտը կապած է ընկերներուն հետ»:
Կշտանալ	Գործիական (կշտութիւն յառաջացնող առարկան)	«Հաց ու պանիրով կշտացաւ»:
	Բացառական (այն առարկան, որ ենթական չուզէ այլեւս ուտել զայն)	«Ամեն օր փիլաւ ուտելէն ա՛լ կշտացած եմ»:

Բայ	Հոլով (իմաստ)	Օրինակ
Մեղքնալ	Տրական	Մեղքնալ մեկուն:
	Հայցական	«Արդեն կը մեղքնայի զինքը»
Պատահիլ	Տրական	Ի՞նչ պատահեցաւ քեզի:
	Հայցական	Ի՞նչ պատահեցաւ երէկ:
Պատմել	Հայցական	Պատմել պատմութիւն մը:
	Բացառական	Պատմել հայրենիքէն:
	Սեռական (մասին կապով)	Պատմել անցեալի մասին
Վայելել	Հայցական (ունենալ, հաճոյքով ճաշակել)	Վայելել համերգ մը:
	Տրական – (յարմարիլ, պատշաճիլ)	«Գլխարկը վայելած է քեզի»:

Որոշ բայեր սեռ կը փոխեն՝ նայած գործածութեան, այդ պարագային խնդիրներն ալ տարբեր հոլով կ’առնեն:

- Ազդել

ա) չէզոք
Օրինակ՝

Մտագարութիւնը կ’ազդէ **մտածելակերպին, վարուելակերպին** եւ ամենօրեայ գործերը կատարելու **կարողութեան,**

կամ՝
Զաւախքի իրաքանչիւր իրադարձութիւն կ’ազդէ **Հայաստանի վրայ:**

բ) ներգործական
Օրինակ՝

Ինչո՞ւ **սարսափ** կ’ազդէ հայրենադարձութեան առաջադրանքը:

Բայական կրկնասեռություն և սեռափոխություն

ա) Երկսեռ բայեր՝ ներգործական և չէզոք

Արդի արեւմտահայերէնի մէջ ներգործական բայերէն ոմանց յատուկ է չէզոք գործածութիւնը: Սեռափոխութեան պատճառներէն մէկը իմաստի փոփոխութիւնն է, երբ նոյն բառը խօսքային տարբեր իրադրութեան մէջ տարբեր իմաստով մըն ալ կը գործածուի:

Բայ	Չէզոք	Ներգործական
Ազդել	«ներգործել» Ձեր ներկայութիւնը կ'ազդէ աշխատանքներու ընթացքին վրայ:	«ներշնչել, թելադրել» Պաշտօնս ահ կ'ազդէ ինձ:
Ապրիլ	«կեանք անցընել» Ան երկար ապրեցաւ:	«զգալ» Ապրիլ երջանիկ օրեր:
Բուրել	«հոտ արձակել» Նոր բացուող ծաղիկ մը կը բուրէ:	Բուրել բան մը Կեանք մը, որ կը բուրէ հաւատք, յոյս ու սէր:
Զարնել	«հարուածել» Ձեռքով զարկաւ ինծի:	«բանով մը հարուածել ուրիշ բանի մը» Մուրճը գամին զարնել: «սպանել, որսալ» Որսորդը այծեամ մը զարկաւ:
Թքել	Թքեց մարդու երեսին:	Վրէժիս հրաբուխը թքեմ թուրքի ճակատին:
Լալ	Մանուկը կու լայ:	Մարդը իր կորուստները կու լար:
Լսել	«անսալ, հնազանդիլ» Լսել ծնողքին:	լսել երգ:
Խաղալ	Մանուկները բակին մէջ կը խաղան:	Մանուկները բերդախաղ կը խաղան:
Խնայել	«գթալ, ողորմիլ, ներել» Դահիճը խնայեց երիտասարդ տղուն:	«տնտեսել, խնայողութիւն ընել» Խնայել դրամը: «առկախել որեւէ գործողութիւն» Այդ ամօթը խնայէ՝ մեր ընտանիքին:
Ծնիլ	«աշխարհ գալ» Մանչուկ մը ծնաւ:	«աշխարհ բերել» Կինը մանչուկ մը ծնաւ:
Հոգալ	«հոգ տանիլ, խնամք տանիլ» Հոգալ որբերուն:	«հայթայթել» Ընտանիքին ապրուստը հոգալ:
Հոտիլ	«նեխիլ, ապականիլ» Ձուկը գլուխէն կը հոտի:	«գէշ կամ լաւ բանի մը հոտ արձակել» Բերանը սխտոր կը հոտի:

Բայ	Չէզոք	Ներգործական
Ճնշել	«նեղութիւն պատճառել» Նախազգացում մը կը ճնշէ կուրծքիս:	«նուաճել, ճզմել» Այս զգացումը կը ճնշէ քեզ:
Նայիլ	«աչքը ուղղել, հայիլ» Աստուած երեսիդ նայեցաւ:	«քննել, զննել, բան մը ակնկալել» Բժիշկը քննեց տղան, լեզուն նայեցաւ, կոկորդը նայեցաւ:
Շշնջալ	Ծառերը կը շշնջան:	Ականջիս գաղտնիք մը շշնջաց:
Ողբալ	Ողբացին ու լացին մեռելին վրայ:	Կ'ողբամ կորուստներս:
Պարել	«կաքաւել» Մինչեւ առտու պարեցին:	Տղաքը քոչարի պարեցին:
Վայելել	«յարմարիլ, պատշաճիլ» Գլխարկը վայելած է անոր:	«ունենալ, ըմբռնել» Վայելել կեանքը:
Վնասել	«վնաս պատճառել, ւաւերել» Ապականութիւնը կը վնասէ առողջութեան:	«կորսնցնել» Վնասել հարիւր դրամ:

Արեւմտահայերէնի մէջ շարք մը չէզոք բայեր սկսած են ներգործական ըլլալ առանց իմաստափոխութեան: Ասիկա պայմանաւորուած է խնդրառութեան երկձեւութեամբ՝ տրականէն հայցական:

Բայ	տրական	հայցական
Բարեւել	Բարեւ մայրիկիդ:	Գլխով բարեւեց մեզ, բայց չմօտեցաւ:
Հանդուրժել	Ան նախատինքի հանդուրժեց:	Հանդուրժեց իմ ներկայութիւնը:
Մեղքնալ	Մեղքցայ իրեն:	Գոնէ մայրիկդ մեղքցիր:
Մտիկ ընել	Նոյ Աստուծոյ մտիկ ըրաւ ու տապան շինեց:	Մտիկ ըրաւ ջութակի թելերուն ճիշերը:
Ունկնդրել	Ունկնդրեց, ինչպէս շատերուն աղաչանքներուն էր ունկնդրած:	Ժողովը ունկնդրեց շրջաններու գործունէութեան տեղեկագրական զեկուցումները:
Սպասել	Սպասենք որ կլոր թուականի մը:	Տէրը մեր հայրն է, որ մեզ կը սպասէ:
Սկսիլ	Լրագրողներու Համահայկական 9-րդ Համաժողովը սկսաւ իր աշխատանքներուն:	Յանուն արդարութեան երթ կը սկսիմ:

բ) Երկձեռութեամբ կրկնասեռ բայեր՝ ներգործական եւ չէզոք

Ձեւի փոփոխութիւնը կ'արտայայտէ քերականական եւ բառային իմաստի փոփոխութիւնը:

1) Սեռակազմ վերջաւորութիւններով տարբերակուող բայեր.

- ուիլ-ով կրաւորական սեռի բայի կազմութիւն՝ սիրել-սիրուիլ, տեսնել-տեսնուիլ, խօսիլ-խօսուիլ, կարդալ-կարդացուիլ
- ել լծորդութեան ներգործական բայերու իլ-ի փոխակերպումով չէզոք սեռի (կրաւորական) բայի կազմութիւն՝ վառել-վառիլ, փարատել-փարատիլ, մարել-մարիլ
- ացնել/եցնել/ցնել վերջաւորութեամբ ներգործական եւ չէզոք բայերու ներգործական (պատճառական-անցողական) սեռի բայի վերածում, ինչպէս՝ կարդալ-կարդացնել, մօտենալ-մօտեցնել, ճանչնալ-ճանչցնել

2) Բայի ձեւափոխութեամբ պայմանաւորուած սեռափոխութիւն.

Բայ	Սեռ	Օրինակ
Ջիջիլ Ջիջանիլ	ներգործական	«սեփական կամքով բան մը ուրիշին տալ» Կիլիկիոյ արքան գահը զիջեցաւ իրեն:
	չէզոք	«հարկադրաբար ընդունիլ նուաստացուցիչ համարուած բան մը» Անոնց վրայ ակնարկ մը նետելու իսկ մի զիջանիր:
Հոտոտել հոտոտալ	ներգործական	«հոտ քաշել» Ո՞ր ծաղիկը ես հոտոտամ:
Ծխել ծխալ	ներգործական	Օրը երկու գլանակ կը ծխեմ:
	չէզոք	«մխալ, ծուխ արձակել» Այդ սպիտակ տան ծխնելոյզը կը ծխայ:
Կարօտնալ Կարօտիլ	ներգործական	«կարօտ զգալ մէկուն կամ բանի մը հանդէպ» Հայրենիքս կը կարօտնամ:
	չէզոք	«կարիքը ունենալ բանի մը» Բայց ես դեռ երկար ատեն ուսուցանելէ աւելի ուսանելու կը կարօտիմ:
Հաւանիլ Հաւնիլ	չէզոք	«հաճութիւն յայտնել, համաձայնիլ, յօժարիլ» Հաճութեամբ կը հաւանիմ այդ փափաքին:
	ներգործական	«սիրել, հաճելի գտնել» Այս գործը շատ կը հաւնիմ:

գ) Դիմաւոր բայ-աներեւոյթ կապակցութիւններու խնդրառութիւնը

Ասիկա բայի աներեւոյթին կամ անորոշ դերբային հետ այլ բայի մը աներեւոյթին կամ դիմաւոր ձեւերուն համատեղ գործածութիւնն է, ինչպէս գրել սկսիլ, կարենալ երգել, կը սիրեմ կարդալ, ըսել կ'ուզեմ եւ այլն:

Հարց է, թէ աներեւոյթը ի'նչ հոլովով կը դրուի այսպիսի կապակցութիւններու մէջ: Ներգործական բայի խնդիրը միշտ հայցական հոլով է. Նոյնպէս աներեւոյթի պարագային. կը սիրեմ երգել > երգել կը սիրեմ
Նոյնպէս՝ կը պարտադրեմ գրել, կ'արգիլեմ ծխել եւ այլն:

Ներգործական բայերէն ոմանք երկու խնդիր կ'ունենան՝ ուղիղ խնդիր հայցական հոլովով եւ անուղղակի խնդիր տրական հոլովով (Մարդը խօսքը ուղղեց ներկաներուն):

Ինչպէ՞ս վարուիլ երբ խնդիրներէն մէկը աներեւոյթն է:
Հոս երկու կաղապար կը գործէ՝
1) Պարտադրել մէկուն (անուն-դերանուն) բան մը ընել կամ ըլլալ (աներեւոյթ).
2) Ստիպել մէկը (անուն-դերանուն) բան մը ընելու կամ ըլլալու (աներեւոյթ):

Առաջին կաղապարին կը հետեւին պարտադրել եւ արգիլել բայերը. անունը՝ տրական, իսկ աներեւոյթը՝ հայցական հոլովով.
Հայրը արգիլեց զակին լողի երթալ: Ծիշդ ինչպէս՝ Հայրը զակին արգիլեց խաղը:

Երկրորդ կաղապարին կը հետեւին ստիպել, հարկադրել, բռնադատել, հարկաւորել, պարտաւորել բայերը. անունը՝ հայցական, իսկ աներեւոյթը՝ տրական հոլով.
Հայրը ստիպեց տղան պարտականութիւնը գրելու:

Աներեւոյթը չէզոք բայի խնդիր դառնալու պարագային կը ստեղծուի երկուութիւն:
Աներեւոյթը կրնայ դրուիլ թէ՛ հայցական եւ թէ տրական հոլովներով՝ գրելու սկսաւ ...սկսաւ գրել:

Բայ	տրական	Հայցական
Սկսիլ	Ես ալ վազելու կը սկսիմ:	Եւ ես կը սկսիմ մտածել:
Ձգտիլ	Կը ձգտիմ իր կարիքները իմ կարիքներէս առաջ դասելու:	Կը ձգտիմ զանոնք իրականացնել հասարակութեան մէջ:
Համարձակիլ	Այս բանը ընելու համարձակեցաւ:	Համարձակեցաւ զիս սիրելը յայտնել:
Յանդգնիլ	Յանդգնեցաւ յայտնուելու այդ եռեակի կողքին:	Յանդգնեցաւ սկզբունքային քայլ մը ընել:
Յօժարիլ	Կը յօժարէր հոն երթալու:	Անոնք յօժարեցան ճամբորդել:
Վարանիլ	Կը վարանիմ իրեն հետեւելու:	Սակայն վճռական ըլլալ կը վարանիմ:

ԿԱՊԱԿԱՆ ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆ

Կապ կը կոչենք նախադրութիւններու եւ յետադրութիւններու ամբողջութիւնը:

Ամեն կապ հանդէս կու գայ գոյականի մը կամ առարկայանիշ բառի մը հետ, որ կը կոչուի **կապի խնդիր** կամ **կապուող բառ** եւ կ'ունենայ հոլով մը:

Կապը եւ խնդիրը միասնաբար կը կազմեն **կապական լրացում** մը, որ կրնայ ըլլալ խնդրային կամ պարագայական:

Կարգ մը կապեր ունին խնդրառական այլազանութիւն:

Կապի խնդիրներու հոլովներու օրինակներ

Կապ	Խնդիրի հոլով	Օրինակ
առ	հայցական	Թուղթ առ Երեւան
առանց	տրական	առանց քեզի առանց նախապայմանի առանց ընկերներուս
առաջ, ետ(ք)	բացառական (տեղի եւ ժամանակի պարագայ)	մեզմէ առաջ, այդ օրէն առաջ Քրիստոսէ ետք
	հայցական (քանակի պարագայ)	Երկու քայլ առաջ, մէկ քայլ ետ հարիւր մեթր ետք
առթիւ	սեռական (իբր նախադրութիւն)	վկայուելուդ առթիւ, յաջողութեանդ առթիւ
ասդին, անդին, հեռու	բացառական (տեղի եւ ժամանակի պարագայ)	անտառէն անդին, սահմանէն անդին տունէն հեռու
	հայցական (քանակի պարագայ)	քայլ մը ասդին
ատեն	սեռական	ուտելու ատեն մի՛ խօսիր
բացի	բացառական (խնդիրը բութ կ'առնէ)	բացի ինձմէ՝ մարդ չկար այնտեղ
դէմ մօտ	սեռական (տեղի պարագայ)	անոր մօտ, մարդու մօտ, մեր դէմ նստած է
	տրական (հակառակութիւն մը, փոխաբերական երանգ մը)	մեզի դէմ կը խօսի ձեզի դէմ կը կանգնի

Կապ	Խնդիրի հոլով	Օրինակ
դէպի	հայցական (գոյականներու հետ)	դէպի տուն, դէպի յաղթանակ
	տրական (անձնական դերանուններու հետ)	դէպի ինծի կու գար
դիմաց շուրջ բոլորտիք	սեռական (անձնական դերանունները՝ դիմորոշ յօդով, գոյականները՝ առանց յօդի)	իմ դիմացս նստէ, մեր շուրջը պարեցէք խանութին դիմաց, աւազանին շուրջ տան բոլորտիք ծաղիկ տնկէ
ետեւ առջեւ	սեռական	դռան ետեւ(ը), բլուրին առջեւէն
	հայցական (քանակ ցոյց կու տայ)	քայլ մը ետեւ
զատ	բացառական	քեզմէ զատ, գրելէ զատ
ըստ համաձայն հակառակ	տրական	ըստ քեզի, ըստ վերջին լուրերուն, մամուլին համաձայն, համաձայն տնօրէնին, ընդհանուր կարծիքին հակառակ
ի (նոյնպէս քանը հին գործածութեամբ)	հայցական	գնա ի Մասիս, ան մեծ է քան զիս
իբրեւ որպէս (հոմանիշներ)	(իբր բացայայտիչ՝ կը հետեւի բացայայտեալի հոլովին)	(զոյգ-զոյգ ընդգծուած են բացայայտեալն ու բացայայտիչը, որոնք ունին նոյն հոլովը)
	ուղղական	դուն՝ իբրեւ աշակերտ, պարտաւոր ես ենթարկուելու
	հայցական	զիս՝ իբրեւ հաշմանդամ, առաջին յարկը զետեղեցին
	սեռական	իր՝ իբրեւ մեծաւորի, իրաւունքները յարգուած են
	տրական	քեզի՝ իբրեւ անդրանիկի, կը ձգենք այս աւանդը
	բացառական	մեզմէ՝ իբրեւ յետնորդներէ, պահանջեցին հաշիւը
	գործիական	ձեզմով՝ իբրեւ մեր լաւագոյն տարրերով, հպարտ ենք

Կապ	Խնդիրի հոլով	Օրինակ
ի դեմս (տեսնել յանձին)		
ի լուր ի տես	սեռական (նախադրություն կամ յետադրություն)	այս զեկոյցին ի լուր ի տես նման վերաբերմունքի
ի վեր ի վար	բացառական (ժամանակի պարագայ)	այն օրէն ի վեր, քննութենէն ի վեր
	հայցական (տեղի պարագայ)	բարձունքն ի վար, գագաթն ի վեր
համար յանուն	տրական (յետադրություն կամ նախադրություն)	աղքատներուն համար, ինծի համար յանուն հայրենիքին
հանդերձ մէկտեղ միասին	գործիական	պիտի այցելենք հանդերձ ընտանեօք պարգեւատրուելով հանդերձ գոհ չմնաց այս թերիներով մէկտեղ գնահատուեցաւ ամբողջ գոյքով միասին տունը ծախեցին
հետ	սեռական / տրական (անձնական դերանուններու հետ)	ինծի հետ կամ իմ հետս
	սեռական (անձնական դերանուններէ տարբեր)	ընկերոջ հետ
հետեւողութեամբ համեմատութեամբ	սեռական (իբրեւ նախադրություն)	իմ հետեւողութեամբ ուղեցոյցին հետեւողութեամբ քրոջ համեմատութեամբ
	Տրական (իբրեւ յետադրություն)	հետեւողութեամբ քեզի հետեւողութեամբ ուղեցոյցին համեմատութեամբ նախորդ վիճակացոյցիդ
ձեռամբ	սեռական (նախադրություն կամ յետադրություն)	ձեռամբ Կարոյին Կարոյին ձեռամբ
մասին պատճառով նպատակով առթիւ միջոցին միջոցաւ	սեռական	իմ մասիս, ձեր մասին, այդ մասին իմ պատճառով տկարութեան պատճառով աշխատելու նպատակով այդ առթիւ, տարեդարձիս առթիւ այն միջոցին բարեկամին միջոցաւ

Կապ	Խնդիրի հոլով	Օրինակ
մեջ միջեւ	սեռական	մեր մեջ, ջուրին մեջ ծառերուն միջեւ
մինչեւ	հայցական (գոյականներու հետ՝ յատուկ թէ հասարակ, նաեւ ցուցական դերանուններու հետ)	մինչեւ իրիկուն, մինչեւ ե՞րբ, մինչեւ այստեղ, մինչեւ տուն, մինչեւ քաղաք, մինչեւ Թորոսը, մինչեւ Ամերիկա եւ Չինաստան մինչեւ այս/ասոր , այդ/ատոր, այն/անոր
	տրական (անձնական դերանուններու, հետ)	մինչեւ մեզի, ինծի, քեզի, անոնց...
յանձին յանձինս	տրական	յանձին ուսուցիչին (եզակի) յանձինս այս մարդոց (յոգնակի)
յետ	սեռական	յետ երկար բացակայութեան
նկատմամբ վերաբերեալ բաղդատմամբ	տրական (նախադրութիւն կամ յետադրութիւն)	ինծի նկատմամբ նկատմամբ այս խնդրին հանգանակութեան վերաբերեալ բաղդատմամբ անցեալ տարուան
նման պէս	տրական	հովի նման նման ինծի Հայրենիքիս պէս քաղցր ոչինչ կայ
շնորհիւ հետեւանքով բերումով կամ բերմամբ	սեռական (յետադրութիւն)	քու շնորհիւ, հօրս օգնութեան շնորհիւ անքնութեան հետեւանքով բախտի բերմամբ
	տրական (նախադրութիւն)	շնորհիւ քեզի շնորհիւ համբաւիդ փրկուեցար
վրայ, տակ վերեւ, ներքեւ	սեռական (անձնական դերանունները՝ դիմորոշ յօդով, գոյականները՝ առանց յօդի)	իմ վրաս ծածկէ ծառին տակ նստէ լեռան վերեւ, ծառին ներքեւ
չափ	տրական	ինծի չափ, այս ամանին չափ
տեղ	սեռական	ապուշի տեղ մի՛ դներ զիս

Կապ	Խնդիրի հոլով	Օրինակ
Փոխանակ փոխարեն փոխան (հոմանիշներ)	տրական (նախադրություն)	փոխանակ անգործ նստելու՝ տան ծորակը նորոգեց
	սեռական (յետադրություն)	անգործ նստելու փոխարեն տան ծորակը նորոգեց:
	տրական (նախադրություն կամ յետադրություն)	փոխան գրքի ահա սուսեր պտուղի փոխան արմտիք կը ստանայինք եարի փոխան զենք եմ գրկեր
	տարբեր հոլովներով խնդիրներ՝ երբ փոխարեն -ը դիմորոշ յօդ առնէ	քու փոխարենդ եղբայրդ թող գայ խնձոր չգտայ. փոխարենը նարինջ գնեցի
Քան	բոլոր հոլովները	դուն աւելի բարձրահասակ ես, քան ես քեզի աւելի տուին, քան եղբօրս քեզմէ աւելի պահանջեցին, քան զաւակէդ
Քով	սեռական (անձնական դերանունները՝ դիմորոշ յօդով, գոյականները՝ առանց յօդի)	իմ քովս, քու քովէդ աղջկան քով

ԱՂԲԻՒՆԵՐ

Ա. Գ. Աբրահամեան, Բ. Յ. Վերդեան, Վ. Ա. Քոսեան, Հայերէն լեզուի դասագիրք, երկրորդ տպագրութիւն, Երեւան 1968

Յովհաննէս Գազանճեան, Նոր քերականութեան արդի հայերէն լեզուի, միջին դասընթացք, պատկերազարդ, հինգերորդ տպագրութիւն, հրատ.՝ Գրատուն Ա. Յակոբեան, Կ. Պոլիս, 1934, 237 էջ:

Արմենակ Եղիայեան, Արեւմտահայերէնի ուղղագրական, ուղղախօսական, ոճաբանական ուղեցոյց, հովանաւոր՝ Գալուստ Կիլլալենկեան հիմնարկութիւն, Պէյրութ 2022

Յակոբ Չոլաքեան, Արեւմտահայերէն (կանոնակարգ եւ խնդիրներ) Բ. գիրք, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտ, Երեւան 2019

պատրաստեց Սանան Զէյթեան
խմբագիր՝ Վրէժ-Արմէն Արթինեան